

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց,  
որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը» Մարկոս 10.14:

Հայաստանեայց Եկեղեցւոյ  
Սուրբ Յակոբ  
Կիրակնօրեայ Դպրոցի Ամսաթերթ

ՄԱՇՏՈՑԻ

ԱՐՁԱԳԱՆԳ

[www.sourphagop.org/մաշտոցի\\_արձագանգ](http://www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ)



ԻԹ տարի (29-ամեակ)  
2022-ի Տարեկան Բացառիկ

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

# Բովանդակություն

Խօսք՝ Հովիտի եւ Հոգաբարձութեան	3
Մեր խօսքը	4
www.sourphagop.org	5
Հակիրճ տեղեկություններ 2021-22 տարեշրջանի մասին	6
Աշակերտական ներկայութեան տախտակներ	8
Ձեռնարկներ եւ արտադասարանային աշխատանքներ՝ Ժամանակագրական շարքով	9
“The Armenian Church” Գիրքի ներկայացում	10
2022 Ս. Զատիկուան ճրագալոյցի պատշաճեցում ընթերցումներ մատուցմամբ մեր աշակերտներուն	11
Նկարներ՝ Կիրակնօրեայ Դպրոցի 2021-22 տարեշրջանէն	12
2021-22 տարեշրջանի կազմը	28

## ՎԵՐԱՄՈՒՏ

# 11 Սեպտ. 2022

Ժամը 10:30



# ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒԲ ԱՌԱՋ. ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՑԻ

Église Arménienne Sourp Hagop Armenian Church

Հինգշաբթի, 5 Մայիս 2022

050/21-22

**Սիրելի տնօրէնութիւն, ուսուցչական կազմ,  
ծնողներ, աշակերտներ եւ աշակերտուհիներ  
Ս. Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի,  
աստ,**

Սիրելիներ,

Յիսուս Տաւր կոյսերու առակը պատմելէ ետք, ըսաւ. «...արթո՛ւն մնացէք, որովհետեւ չէք գիտեր Մարդու որդիի գալուն ո՛չ օրը եւ ո՛չ ալ ժամը», Մտ 25.13 (ՆԱԹ):

Յիսուսի կոչն է ապրիլ արթնութեամբ:

Ի՞նչ տեսակ արթնութեան մասին է խօսքը:

Հոգևոր արթնութեան: Հոգևոր արթնութիւնը՝ արթնութիւն է թե՛ քնանալու ժամանակ, եւ թե՛ գիտակցական արթնութեան ժամանակ: Հոգևոր արթնութիւնը վստահութիւն եւ հնազանդութիւն է Աստուծոյ Կամօրին, անիլ է անոր Հոգիին շնորհներով, եւ ծառայել է անոնցմով, որպէսզի Երկինքի արքայութիւնը գայ: Անշուշտ, հաւատաւոր հոգիներուն մէջ միշտ ներկայ է արքայութիւնը, բայց նաեւ՝ անիկա պիտի գայ: Եւ երբ գայ՝ անոր ընդառաջողները կատարեալ պիտի ըլլան...

Ս. Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցը՝ հոգևոր արթնութեան կրթարան մըն է, որ մեր համայնքին տրուած մեծ պարգեւ մըն է: Անոր առաքելութիւնն էր, է ու պիտի ըլլայ՝ դաստիարակելով պատրաստել հոգևորապէս արթուն սերունդներ. քանի որ ան գիտէ, թէ հոգևորապէս արթուն սերունդներն են, որ նորոգութեան շունչ կրնան բերել մեր հաւարական կեանքերուն եւ զործունէութեանց:

Արդ, երախտագիտութեամբ կը գովենք ձեր նուիրումը, սիրելի տնօրէնութիւն եւ ուսուցչական կազմ: Սրտագին կը գնահատենք ձեր համոզումը, ծնողներ, թէ այս կրթարանը սքանչելի բարիք մըն է ձեր/մեր գաւակներուն: Իսկ դուք՝ աշակերտներ եւ աշակերտուհիներ՝ շա՛տ ապրիք, որ Աստուծոյ Խօսքին իմաստութիւնը եւ պապենական ասանդութիւններ կը սորվիք: Խոստմնալից ապագան՝ այսօր կը մշակուի:

Լաւագոյն մտղթանքներով՝

**Հովիւ եւ հոգաբարձութիւն  
Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ**

☒3401 Olivar-Asselin, Montreal, Qc H4J 1L5 ☎ 514 331 5445 Email: eglise@sourphagop.net

## ՄԵՐ ԽՕՍՔԸ

Փառք կու տանք Աստուծոյ, որ այս տարի եւս կրցանք Կիրակնօրեայ Դպրոց ունենալ 32 Կիրակիներ, որոնցմէ Յունուարի 2 Կիրակիները, Թագաժահրի պատճառով, միայն երկրորդականը առցանց շարունակեց իր գործունէութիւնը:

Այս տարի նաեւ 29-րդ տարեդարձն էր մեր ամսաթերթին՝ «Մաշտոցի Արձագանգ»ին եւ Սուրբ Յակոբի տօնին՝ Դեկտեմբեր 2021-ին մեր կայքէջին՝ [www.sourphagop.org](http://www.sourphagop.org)-ին 21-րդ տարեդարձն էր:

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»: Յիսուս Քրիստոսի արտասանած խօսքը, որ Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու նշանաբանն է, կը մնայ հիմը մեր եկեղեցւոյ պայծառութեան: Այն եկեղեցիները, որոնց մանուկները արգելքներ ունին Յիսուսին երթալու, դատապարտուած են պարպուելու: Յիսուսի այս խօսքերը պէտք է ըլլան հիմը Հայաստանեայց Եկեղեցւոյ մտապատկերին. մանաւանդ Գանատայի մէջ՝ երբ պետութեան կողմէ վարժարաններու մէջ, ընդհանրապէս կրօնական դաստիարակութեան սահմանափակումով, եկեղեցիներուն համար կենսական կը դառնայ Հայ Քրիստոնէական դաստիարակութիւն փոխանցել նոր սերունդին Կիրակնօրեայ Դպրոցներու միջոցով:

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»: Ասկէ 93 տարիներ առաջ, Կիլիկիոյ Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոս իր իմաստութեամբ, որպէս նշանաբան ունենալով Յիսուսի այս խօսքը, մէկ նախադասութեամբ կ'աղերսէր հայ մայրերուն որ իրենց զաւակները Քրիստոսի մօտեցնեն: Ան Քրիստոսի խօսքով կը սաստեր բոլոր անոնք որոնք տարբեր ձեւերով արգելք կը հանդիսանային որ հայ ազգին մանուկները մօտենան Քրիստոսի:

Այս տարուան ընթացքին, բաղդատած նախորդ տարուան, մեր արձանագրուող աշակերտներուն թիւը 45-էն 100-ի բարձրացաւ եւ իւրաքանչիւր Կիրակի օրուան միջին ներկայութիւնն ալ 26-էն 52-ի: Այս տարուան ընթացքին, ուրախ ենք յայտարարելու, թէ ունեցանք մեծագոյն թիւով (25) Երկրորդական դասարաններու աշակերտներ եւ առաջին անգամ ըլլալով, Յունուարէն սկսեալ, CEGEP-ի դասարան մը 5 աշակերտներով:

Աստուծոյ կամքով մեր 43-րդ տարեշրջանի վերամուտը, ինչպէս ամէն տարի, կը սկսինք Խաչվերացին՝ որ այս տարի Սեպտեմբեր 11, 2022-ին է: Յոյսով ենք որ մեծագոյն թիւով աշակերտներ՝ մանկապարտէզի, նախակրթարանի, երկրորդականի եւ CEGEP-ի մակարդակով պիտի միանան մեր Կիրակնօրեայ Դպրոցին:

Փառք՝ Աստուծոյ, Պայծառութիւն՝ Հայ եկեղեցւոյ:

Տնօրէնութիւն եւ Ուսուցչական կազմ:



## ՀԱԿԻՐՃ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ 2021-22 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցու Կիրակնօրեայ Դպրոցը կը վայելէ եկեղեցույ հովանաւորութիւնը:

### 42-ամեակ Կիրակնօրեայ Դպրոցին

2021-22 տարեշրջանը 42-րդ տարեշրջանն էր: Կիրակնօրեայ Դպրոցը սկսաւ իր գործունէութիւնը Խաչվերացի Կիրակին՝ 14 Սեպտեմբեր 1980-ին եւ յաջորդական 42-րդ տարեշրջանը բոլորեց այս տարի: Այս տարեշրջան սկսաւ Կիրակի՝ 12 Սեպտեմբեր 2021-ին եւ տեւեց մինչեւ Մայիս 22, 2022: Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան ամէն Կիրակի օրերը 10:30-13:00: Այս տարի Դպրոցը ունեցաւ Մանկապարտէզի, Նախակրթարանի 4, Երկրորդականի 2 եւ առաջին անգամ ըլլալով CEGEP-ի դասարան մը: CEGEP-ի դասարանին համար մշակուեցաւ 2-տարուայ խտացեալ ծրագիր մը, ուր այս դասարանի աշակերտը պիտի կարենայ երկրորդականի ծրագիրը ամբողջացնել:

### 29-ամեակ «Մաշտոցի Արձագանգ»-ին

Մեր 2021-22 տարեշրջանի ընթացքին նաեւ՝ 29-րդ տարին ըլլալով, հրատարակեցինք մեր պարբերաթերթ «Մաշտոցի Արձագանգ»ը ամսական դրութեամբ: «Մաշտոցի Արձագանգ»ը կը տպուի եւ PDF ձեւով կը կարդացուի աշխարհի 5 ցամաքամասերուն վրայ

[http://www.sourphagop.org/մաշտոցի\\_արձագանգ](http://www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ) էջին վրայէն:

### 21-ամեակ [www.sourphagop.org](http://www.sourphagop.org)-ին

10 Դեկտեմբեր 2000-ին, Սուրբ Յակոբի տօնին օրը, դպրոցը ունեցաւ իր կայքէջը՝ [www.sourphagop.org](http://www.sourphagop.org)-ը: Մեր կայքէջը ունի հետեւեալ բաժինները.

Մեր մասին, Սուրբեր, Տօներ, Գիրքեր (ուր կրնաք գտնել մեր դասագրքերը, Ազգապատումը իր 3 հատորներով, Բառարան, Եկեղեցական Բառարան, Սուրբ Պատարագը, Ժամագիրքը, Գրաբար Նոր Կտակարանը եւ Կրօնական Գիտելիքները), Ժամանակացոյց, «Մաշտոցի Արձագանգ» ի բոլոր թիւերը, Հայերէն տառատեսակ, Ճաշու Աւետարան, Տօներ, Պարբերաթերթ, Կապեր, Կարծիք, Խաղեր, Զարգացման Մրցում, Church Timeline, Daily Bible:

### Ս. Զատկուան ճրագալոյցի ընթերցումներ

Կիրակնօրեայ Դպրոցի 3 ուսուցիչներ եւ 9 աշակերտներ Ապրիլ 16-ին եկեղեցույ մէջ կատարեցին մարգարէական ընթերցումները:

### ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՎԻՃԱԿ

2021-22 տարեշրջանին արձանագրուած աշակերտութեան թիւը 100 էր, իսկ շարաթական ներկայութիւնն էր 52՝ բաժնուած 8 խումբերու:

### ԿԱԶՄ

Կիրակնօրեայ Դպրոցի 2021-22 տարեշրջանին ունեցանք 8 տարբեր բաժանումներ հետեւեալ ձեւով.

Խումբ

Բողբոջ, Կոկոն եւ Ծաղիկ

Նախակրթարան Ա.

Նախակրթարան Բ.

Նախակրթարան Գ. եւ Դ.

Նախակրթարան Ե. եւ Զ.

Երկր. Ա.

Երկրորդական Բ. Գ. Դ.

Երկրորդականի Պատասխանատու  
Երգերու եւ շարականներու ուսուցում

CEGEP-ի մասնաւոր Ծրագիր

«Մաշտոցի Արձագանգ»

Կայքէջի պատասխանատու

FACEBOOK-ի եւ INSTAGRAM

Տնօրէնի Օգնական

Տնօրէն

Կազմը գումարեց ժողովներ, որոնց ընթացքին արծարծուեցան ծրագրային, կարգապահական, արտադասարանային աշխատանքներու վերաբերող եւ այլ նիւթեր:

ԴՊՐՈՑԻ ԱՌՕՐԵԱՆ

2021-22 տարեշրջանին Կիրակնօրեայ Դպրոցի առօրեան ընթացաւ Հայաստանեայց Եկեղեցոյ Կիրակնօրեայ Դպրոցներու դասաւանդական հիմնական կառուցումաձքին համաձայն լսարանային եւ դասարանային բաժանումներով, ուր դասաւանդուեցան Ս. Գրային, ծիսական, բարոյագիտական եւ գործնական ծանօթութիւններ, գիտելիքներ եւ աղօթքներ:

Լսարանային բաժին


Տերունական աղօթքի, մաղթանքներու եւ Կիրակնօրեայ Մաղթերգէն ետք, աշակերտները բաժնուեցան իրենց խումբերուն: Պահերը ընթացան հետեւեալ ձեւով.

- Ոսկեղէն համարներու կամ Սաղմոսներու ուսուցում
- Բարոյալից պատմութիւններու ներկայացում
- Կրօնական երգերու եւ շարականներու ուսուցում
- Ճաշու Աւետարանի ընթերցում եւ մեկնաբանութիւն
- «Մաշտոցի Արձագանգ»-ի սերտողութիւն:


Դասարանային բաժին

Դասաւանդուեցաւ ըստ դասագիրքերու:

## Աշակերտական Ներկայութեան Տախտակներ



2021-22 տարեշրջանի իւրաքանչիւր դասարանի արձանագրութիւն եւ միջին ներկայութիւն



2021-22 տարեշրջանի իւրաքանչիւր Կիրակի օրուայ ներկայութիւն



ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	
12 Սեպտեմբեր 2021	Տարեսկիզբ եւ վերամուտ
19 Սեպտեմբեր 2021	Վարժարանի աշակերտութիւնը մասնակցեցաւ Սուրբ Պատարագի խորհուրդին եւ հաղորդութիւն ստացաւ
10 Հոկտեմբեր 2021	Թարգմանչաց տօնին յատուկ յայտագիր
30 Հոկտեմբեր 2021	Արամ Ա. Կաթողիկոսի «The Armenian Church» գիրքի ներկայացում
19 Դեկտեմբեր 2021	Սուրբ Յակոբի եւ Սուրբ Ծնունդի Տօնակատարութիւն:
9 Յունուար 2022	Առցանց՝ միայն երկրորդականի համար:
16 Յունուար 2022	Առցանց՝ միայն երկրորդականի համար:
23 Յունուար 2022	Հաստատում CEGEP-ի ծրագրին՝ 4 աշակերտներով:
27 Փետրուար 2022	Վարդանանց եւ Բուն Բարեկենդան տօներու յատուկ տօնակատարութիւն
Դպրոցը Մեծ Պահքի շրջանին ունեցաւ իր աշակերտական պահքի հետեւեալ ժամանակացոյցը.	
Ա. շաբաթ	Chips
Բ. շաբաթ	Հեռատեսիլ, համակարգիչ, այլ պաստառով խաղեր
Գ. շաբաթ	Տուրմ
Դ. շաբաթ	Կազային խմիչքներ
Ե. շաբաթ	Շաքար
Զ. շաբաթ	Ծամոն
Է. շաբաթ	Հակիթ
9 Մարտ 2022	Երկրորդականի խումբ մը աշակերտներ, պատասխանատուին հետ ներկայ եղան հսկումի ժամերգութեան եւ խորհրդածութեան «Ս. հոգիին պտուղները Սէրը, Ուրախութիւնը, Խաղաղութիւնը, Բարութիւնը, Հեզութիւնը, Ինքնատիրապետումը եւ Առողջ Դաստիարակութիւնը» նիւթին:
10 Ապրիլ 2022	Ծաղկազարդ՝ Կիրակնօրեան փակ էր, երկրորդականի մասնաւոր ծրագիր եկեղեցւոյ մէջ:
16 Ապրիլ 2022	Ս. Զատկուան Ճրագալոյցի Պատշաճեցում ընթերցումներ Մատուցմամբ մեր Աշակերտներուն
17 Ապրիլ 2022	Ս. Զատիկ Կիրակնօրեան փակ էր:
24 Ապրիլ 2022	Հայոց Ցեղասպանութեան Սուրբ Նահատակներու օր՝ Կիրակնօրեան փակ էր:
8 Մայիս 2022	Մայրերու տօն, Հանդէսի փորձ:
22 Մայիս 2022	Ամավերջի հանդէս եւ Տարեփակ

# “The Armenian Church” Գիրքի ներկայացում

Շաբաթ, 30 Հոկտեմբեր 2021-ի երեկոյեան 6.30-8.00, Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցոյ մէջ ներկայացուեցաւ Արամ Ա. Կաթողիկոսի «The Armenian Church»ը: Ձեռնարկը կազմակերպուած էր եկեղեցոյ Կիրակնօրեային կողմէ:

Բացման խօսքը կատարեց պրն. Առէն Պապիկեան: Գիրքը ներկայացուց պրն. Մհեր Պանքեան: Գիրքէն հատուած մը ընթերցեց պրն. Հրակ Պանքեան: Ձեռնարկի աւարտին իւրաքանչիւր ներկայի գիրքէն օրինակ մը նուէր տրուեցաւ:

Ձեռնարկը կը վայելէր Օրհնութիւնը Առաջնորդ սրբազանին, եւ հովանաւորութիւնը տ. եւ տիկ. Լաֆֆի եւ Փօլա Աշգարեանի: Հովանաւորութիւնը ստանձնուած էր ի յիշատակ Աշգարեան նուիրատուներու զակին՝ Քրիստաֆըրի:



2022 Ս. Զատիկուան Ճրագալոյցի Պատշաճեցուած ընթերցումներ  
Մատուցմամբ մեր Աշակերտներուն

Շաբաթ, 16 Ապրիլ 2022:

Ճրագալոյցի Ս. Պատարագէն առաջ, Ս. Յակոբ Կիրակնօրեայ դպրոցի աշակերտներ եւ ուսուցիչներ Ս. Գրային ընթերցուածները կարդացին:



ՆԿԱՐՆԵՐ՝ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅԻ 2021-22 ՏԱՐԵՇՐՁԱՆԷՆ



Մանկապարտեզ



Նախակրթարան Ա.



Նախակրթարան Բ.



Նախակրթարան Գ. և Դ.



Նախակրթարան Ե. և Զ.



Երկրորդական Ա.



Երկրորդական Բ., Գ. և Դ.



Երկրորդական Ե.



CEGEP

Կիրակի՝ 12 Սեպտեմբեր 2021-ին տեղի ունեցավ մեր 2021-22 Տարեշրջանի (42-րդ) Վերամուտը: Արձանագրությունները շարունակուեցան Սեպտեմբեր 19-ին, եւ Սեպտ. 26-ին: Մեր Գործունեությունը, ամէն Կիրակի Ժամը 10:30 – 1:00: Ներփակ կը գտնէք Վերամուտէն նկարներ:



Նշելու համար Խաչվերացը, աշակերտները խաչեր պատրաստեցին...:



Կիրակի 19 Սեպտեմբերին, Ս. Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտ-աշակերտուհիները իրենց դասարաններուն մէջ սորվեցան Վերջին ընթրիքին եւ Սբ. Հաղորդութեան խորհուրդին մասին, որմէ ետք եկեղեցի ուղղուեցան Ս. Հաղորդութիւն ստանալու համար: Եկեղեցւոյ մէջ, նախ հետեւեցան Զոյման աղօթքին, ապա Ս. Հաղորդուեցան ստացան:



3 Հոկտեմբեր 2021` Իրենց սովորական ծրագիրին կողքին, աշակերտները սերտեցին Յիսուսի 72 աշակերտներուն տունը:

17 Հոկտեմբեր 2021 Իւրաքանչիւր դասարան շարունակեց իր տարեկան ծրագիրը եւ նշեց Սուրբ Աւետարանիչներուն տունը:

24 Հոկտեմբեր 2021` Իրենց սովորական դասապահերուն եւ երաժշտութեան պահերուն կողքին, աշակերտները սերտեցին Գիւտ Խաչի տունը:



### Մրբոց Թարգմանչացը Կիրակնօրեայէն ներս

Կիրակի՝ 10 Հոկտեմբեր 2021 Մրբոց Թարգմանչաց տօնը ուսումնասիրելէ ետք, իւրաքանչիւր դասարան անցաւ իր ծրագիրին, որուն կը միանայ նաեւ երգեցողութեան պահերը: Մրբոց Թարգմանչաց տօնին առիթով իւրաքանչիւր աշակերտ հայերէն գիրք մը կը ստանայ որպէս նուէր: Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտները ստրվեցան Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց խօսքերը թէ.

«Առանց մեսրոպեան ոճով մարդակերտումի, խախուտ են բոլոր կերտուածքները մեր ազգային կեանքին, ինչպէս խախուտ են աւազահիփն ու հողաշէն կառոյցները աշխարհի...»:

«Հայ Գիրքը միտո՞ն է մեր ժողովուրդի գաւակներուն համար: Ան, որ Հայ Գիրք կը կարդայ, կը միւռոնուի հայութեամբ»:



Դասարանային տարեկան ծրագրին կողքին, Նոյեմբեր ամսուան ընթացքին, Կիրակնօրեայ Դպրոցէն ներս յիշատակեցինք հետեւեալ տօները:

- 7 Սուրբ Հրեշտակապետեր Գաբրիէլի եւ Մէքայէլի տօն:
- 14 Սուրբ Առաքեալներու Անդրեասի եւ Փիլիպպոսի տօն:
- 21 Ամենայն Սրբոց (20), Սուրբ Կոյսի Տաճար Ընծայում (21), Բարեկենդան Յիսնակի Պահոց (21)
- 28 Սրբոցն Նիկողայոսի եւ Գրիգորի Սքանչելագործ Հայրապետացն (27), Սուրբ Կուսանաց Յուլիանէի եւ Վասիլուհիի (29)





## Շնորհակալություն

ՀՕՄ-ի Մոնթրեալի «ՍՕՍԷ» Մասնաճիւղին, որ այս տարի եւս շնորհաւորեց մեր Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը եւ մեր աշակերտներուն որպէս կադանդչէք նուիրեց 500 տոլար:

Կիրակնօրեայ դասարանային եւ երաժշտութեան պահերուն կողքին աշակերտները Դեկտեմբեր ամսուան ընթացքին ունեցան հետեւեալ լսարանային պահերը:

5-ին՝ Սուրբ Թադէոս եւ Սուրբ Բարդղղոմէոս առաքեալներու սոն:

12-ին՝ Բարեկենդան Սուրբ Յակոբի Պահքին:

19-ին՝ Սուրբ Յակոբ եւ Սուրբ Ծնունդ: Իւրաքանչիւր աշակերտ նուէր ստացաւ:

Ահաասիկ նկարներ տարբեր դասարաններու տարբեր պահերէ եւ ձեռային աշխատանքներէ:
















# **ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ**

## **ԻԹ. ՏԱՐԻ**

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ի  
թիւերը կը գտնուին նաեւ համացանցին վրայ  
[www.sourphagop.org/մաշտոցի\\_արձագանգ](http://www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ)

### **Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի 2021-22 տարեշրջանի կազմը**

Աննա Մարիա Շամոյեան

Հրակ Պանքեան

Ալեքս Տեմիրճեան

Սդեֆան Տեմիրճեան

Մհեր Պանքեան

Սեւակ Պապիկեան

Շողիկ Թեհինեան

Առէն Պապիկեան

Թամար Գիզիրեան

Յասմիկ Նաճարեան

Շողիկ Նաճարեան

Թային Բարսեղեան

Թորոս Պապիկեան

Շահէ Պաննիս\*

Լոռի Մարտիրոսեան\*

Արեն Արսենյան\*

Ալեք Օլթաճեան\*

Կային Նազարեան\*

\* CEGEP/Օգնականներ